

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը
գրադարանավարի օրվա առթիվ
07.10.2022

2004թ. ապրիլին ՀՀ կառավարության որոշմամբ հոկտեմբերի 7-ը հայտարարվեց գրադարանավարի օր: Արդեն 18-րդ տարին է, ինչ այդ օրը հանրապետության բոլոր գրադարանների դռները մինչ ուշ երեկո բաց են լինում ընթերցասեր հասարակության առաջ: Տոնի խորհուրդը՝ գրքի արժևորումն է, նրա մեծ դերակատարությունն առողջ հասարակության ձևավորման գործում: Գրադարանային համակարգի հարգելի աշխատակիցներ, շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Գրադարանավարի օրվա առթիվ: Բոլոր ժամանակներում գիրքն է եղել իմացության հիմնական աղբյուրը, մտքերի այն շտեմարանը, որն անփոխարինելի է մնում անգամ ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման պայմաններում: Մեր ժողովուրդը հազարամյակների իր պատմության ընթացքում միշտ էլ յուրօրինակ սիրով է վերաբերվել գրին և գրականությանը, իսկ գրագետ, կարդացած մարդն առանձնակի հարգանք է վայելել հասարակության շրջանում: Հանդես գալով որպես ընթերցողի խորհրդատու եւ հաճախ նաեւ առաջնորդ՝ դուք հարգանք եք ձեւավորում երբեք չարժեզրկվող գրի ու գրականության հանդեպ: Ձեր ընտրած մասնագիտությունը եւ կատարած աշխատանքը բարոյական իմաստ ու հասարակական նշանակություն ունեն, որովհետեւ դուք ոչ միայն արժեքներ եք պահպանում ու տարածում, այլեւ իսկապես դավանում այդ արժեքները: Այն նվիրվածությունն ու անտրտունջ աշխատանքը, այն ուրույն մթնոլորտը, որ առկա է գրադարանների պատերի ներսում, ձեզ՝ գրադարանային համակարգի աշխատակիցներիդ, արժանի է դարձնում առանձնահատուկ հարգանքի եւ շնորհակալության անկեղծ խոսքերի: Կրկին շնորհավորում եմ մասնագիտական ձեր տոնը, սեր, քաջառողջություն և համերաշխություն եմ մաղթում բոլորիդ ընտանիքներին: